

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՌԻՏՏԵՐ, ԿՈՆՍՏ., ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԼԱՏՕՆԻ ՄԱՍԻՆ: (Untersuchungen über Plato): Իսկութիւնը և ժամանակագրութիւնը Պլատոնի գրածքների և մի յաւելած՝ Մտքերի ընթացքը և հիմնական հայեցածքները Պլատոնի—Theätet. Շտուտգարտ, 1888 թ., Kohlhammer տպար. (XI+187 էրես, ութածալ). գինն է 2 մարկ 50 Ֆենինգ (1 բուրլի). (Գերմաներէն):

Հեղինակը կամենում է ծայրէ ի ծայր և իւր բոլոր հետեանքներով Գիտտենբերգերի ալս մտքին հետեւել լեզուական նշաններով որոշել Պլատոնի գրածքների ժամանակագրութիւնը և իսկութիւնը: Հեղինակը սպասում է լեզուական նշաններին աւելի արդիւնք, քան ուրիշ նշաններից: Պլատոնի գրածքների մէջ նշմարւած են 40 լեզուական դարձւածներ: Հեղինակը, իւր միակողմանիութեամբ, բոլորովին աչքի չէ առնում այն, ինչ իւր առաջադրած խնդրի նկատմամբ արեւ են Տալսմիւլլեր, Գոմպերց և Յելլեր: Այս մեթոդի պակասութիւնը նորանումն է, որ լեզուական դարձւածների դաճաղանութիւնները կարող են բղխած լինել գրողի կամապականութիւնից:

Իւր ալս աշխատութեանը հեղի-

նակը տալիս է որպէս նախապարտաւորական աշխատութիւն Պլատոնի վարդապետութեան ընդարձակ սուսութեան համար: Այդ գործը հեղինակը համարում է հարկաւոր, որովհետեւ նա ալս համոզմունքին է կհամ, թէ Պլատոնի մասին ալսմ իշխող դատողութիւնը չափազանց աղղւած է Արխտոտելից: Որպէս մի նմուշ իւր ասպաղա աշխատութիւնների Պլատոնի մասին, հեղինակը, մի չաւելւածի մէջ, ներկայացնում է Theätet-ի մտքերի չաջորդութիւնը և հիմնական մտքերը:

Յայտնի է, որ 12-րդ դարում Պլատոնի երկերը հայերէն թարգմանած պիտի լինին, որոնք, սակայն, մեր ձեռքը չեն հասնում. իսկ որ հայ մատենագիրները դրադում էին Պլատոնի Փիլոսոֆիաութիւնով, դորա

վկայութիւնները ունինք 5-րդ դարուց, ուր՝ աստուածաբանական ճշմարտութիւնները հաստատելու համար՝ զի մուս էին մանաւանդ նոր պլատոնա-

կան ուղղութեան, որի հիմնական դաղափարները առնւած էին Պլատոնից:

Ա.

ՆԻԻՄԱՆ Վ. Լ. (Newmen), ԱՐԻՍՏՈՏԵԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ: Մի ներածութիւնով, երկու առաջաբանով և նկատողութիւններով. հատոր I և II, Յրաֆորտ, 1887 թ. (Անգլիերէն):

Առաջին հատորը տալիս է մի նախապատրաստութիւն Արիստոտելի քաղաքականութեան համար. երկրորդը դրադուս է Արիստոտելի զբոսքի ձևագիրներով: Հեղինակը իրան լաւ ծանօթ է ցոյց տալիս նիւթի մասին եղած նաև օտար գրականութեան հետ: Որպէս երևում է, զեռուրիչ հատորներ պիտի լաջորդեն առաջին երկուսին: Արիստոտելի խիստ գիտնական քննադատութիւնը Անգլիայի գիտնականների մէջ նկատելի առաջիմութիւններ է անուս: Մենք ունինք արդէն մի հիանալի հրատարակութիւն Արիստոտելի Nikomachische Ethik Ալէքսանդր Գրանտի

չառ մանրամասն բացատրութիւններով, և նոյնպիսին «Հոգու մասին» զբոսքի վերաբերեալ՝ էդվին Վալլասի: Նիւմանի զիբբը նոցա շարքում արժանաւոր տեղ է բռնում: Մեր հայ հասարակութեան արդէն լաւտնի է, որ նոյն Արիստոտելի ուսումնասիրութեան համար մեր կողմնը կհաւանցեալ տարի Օքսֆորդի համալսարանի մի ալ պրօֆեսոր՝ պ. Կօնիբեր, որը կարծում է, թէ Գաւիթ Անչաղթի հայերէն թարգմանութիւնը միջոց պիտի տալ Արիստոտելի հեղինակութիւնները մի քանի մութ տեղերը պարզելու:

Բ.

ՇԱՉԼԵՐ, ԳՐ. ՄԱՔՍ, ՄԱՐԳՈՒՍ ԾԱՂՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐ (Shasler, Onthropogonie): Ընդհանուր մարդկայինը, նորա էութիւնը և եռատարր զարգացումը, կամ՝ «Ծագումն» լեզուի, բարոյականութեան և արևատի. Լայպցիգ, 1888 թ., տպ. Ֆրիդրիխ (XV+220 էր.), զինը՝ 6 մարկ: (Գերմաներէն):

Այս գրածքում արդէն 70 տարեկանին մօտ ֆիլոսոֆան տալիս է իւր, մի տեսակ, հաւատի դաւանու-

թիւնը (profession de foi). Նորանում նա շօշափում է զիտակցութեան բոլոր լսնդիրները՝ իմացակա-